ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 19.01.2021թ.)

«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

Կ. Դրամբյանի (լիազորագիր՝ տրված 29.01.2021թ.),

քննելով «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 20.01.2021թ. ներկայացված և 21.01.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 20.01.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ),

որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն):

1.2 Ընկերությունն Ընթացակարգին, ի թիվս այլի, մասնակցել է նաև 8-րդ չափաբաժնով, որով պահանջվում է ԱԱՇ օքսիգենատոր մանկական: Ընթացակարգին մասնակցել է համարժեք ապրանքատեսակով:

1.3 Ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվել է ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Եվրոսեթ, Trilly AF AG5232, մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

1.4 Գնահատող հանձնաժողովը 14 հունվարի 2021թ. թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում, հանձնաժողովն արձանագրեց, որ բոլոր ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ 8-րդ չափաբաժնով «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի: Նշված չափաբաժնով ներկայացված Medtronic BBP241 օքսիգենատորը ունի 2լ/րոպե արյան թողունակության ցուցանիշ, ինչպես նաև նախատեսված է մինչև 18կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար: Սակայն Հրավերով նախատեսված մանկական օքսիգենատորը ունի 3.5լ/րոպե արյան թողունակություն և նախատեսված է մինչև 35կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար, ուստի գնահատող հանձնաժողովը որոշոց նիստը կասեցնել և առաջարկի շտկման նպատակով մասնակցին տրամադրել Օրենսդրությամբ սահմանված ժամկետ: Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը անցկացնել 15.01.2021թ. ժամը 14:30-ին:

1.5 15.01.2021թ. Ընկերությունը 14.01.2021թ. արձանագրությամբ հայտնած տեսակետի վերաբերյալ գրությամբ հայտնել է, որ ընթացակարգի 8-րդ չափաբաժնով մասնակցել է համարժեք ապրանքով, իսկ 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով պատվիրատուն պահանջում է մանկական օսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Այսինքն, Հրավերի տեխնիկական բնութագրով այլ պայման ներկայացված չի եղել:

1.6 15.01.2021թ. ժամը 14:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրության 1-ին կետով որոշել է՝ ընդունել ի գիտություն, որ սահմանված մեկ օրյա ժամկետում «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է գրություն, սակայն չի ներկայացրել և չի շտկել իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական

հատկանիշներն այն չափանիշներով, որոնք ներկայացվել էին գնահատող հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի

1-ին կետի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

5-րդ կետի համաձայն՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաեւ առաջարկվող ապրանքի անվանումը, արտադրողը և/կամ ապրանքային նշանը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրերը ներառվում են կնքվող պայմանագրերում:

Հանձնաժողովը գտնում է նաև, որ համարժեք ապրանք առաջարկելու դեպքում այդ առաջարկի գնահատումը իրականացվում է գնահատող հանձնաժողովի կողմից, մինչև հաղթողի ընտրությունը:

Փաստացի ընկերությունը սահմանված ժամկետում ամբողջական տեխնիկական ցուցանիշներ չներկայացնելով չի հերքել գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված տեխնիկական հատկանիշների տարբերությունը և չի հիմնավորել առաջարկած ապրանքի համարժեքությունը հրավերով նախատեսվածին:

Հանձնաժողովը որոշեց մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերության հայտը 8-րդ չափաբաժնով՝ առաջարկված ապրանքը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմքով:

2-րդ կետով հանձնաժողովը որոշել է, հաշվի առնելով այն, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների

կիրառմամբ, ուստի նիստը կասեցնել և բավարար գնահատված բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հրավիրել բանակցությունների գնային առաջարկի նվազեցման շուրջ, որը տեղի կունենա 20.01.2021թ. ժամը 14:00-ին: Բանակցությունների վարման կարգը և ժամկետները կսահմանվեն նիստին:

2.Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 13-րդ հոդվածը սահմանում է

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ եւ հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման եւ վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաեւ պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաեւ աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի եւ այլ ոչ գնային պայմանների ամբողջական եւ համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաեւ գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների եւ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաեւ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքարկվող ընթացակարգի 8-րդ չափաբաժնով պատվիրատուն ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը, պահանջվում է՝ ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Եվրոսեթ, Trilly AF AG5232, մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Մասնակիցը ներկայացրել է համարժեք ապրանք՝ ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Medtronic BBP241 մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Հրավերի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է, որ պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել մանկական օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորումով, այլ չափորոշիչներ առկա չեն:

Պատվիրատուն 15.01.2021թ. թիվ 4-րդ արձանագրությամբ իրավացիորեն մեջբերել է վերը ներկայացված հոդվածի դրույթները, այն, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Ինչպես նաև հղում անելով նույն հոդվածի 5-րդ մասին, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Արդյոք 8-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքը չէր կարող ներկայացվել այնպես, որ հղում չարվեր ֆիրմային անվանմանը, մոդելին, որպեսզի հետագայում տարակերպ մեկնաբանության տեղիք չտար, ինչպես անում է այս դեպքում պատվիրատուն:

Գտնում ենք, որ առանց ֆիրմային անվանման հնարավոր էր ներկայացնել տեխնիկական բնութագիր, որ անհրաժեշտ է մանկական օքսիգենատոր՝ գործարանային կոմպլեկտավորումով:

Պատվիրատուն տեխնիկական բնութագրով առանց անհրաժեշտության նշել է ֆիրմային անվանում և այդ անվանումով առաջնորդվելով է գնահատում այլ ապրանքների համարժեքությունը: Նման պարագայում համարժեք ապրանքատեսակով հայտ ներկայացնելն իմաստազրկվում է, քանի որ, պատվիրատուն ուղեցույց է դիտարկելու բացառապես այդ ֆիրմայի արտադրանքը և ոչ թե այնպիսի չափորոշիչներով ապրանք, որոնք համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, չառաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

2.2 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Օրենքը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշումը (հետայսու՝ նաև Կարգ) չի նախատեսում այնպիսի իրավական կարգավորում, որ գնահատող հանձնաժողովը գնահատման ընթացքում արձանագրությամբ այլ նախապայմաններ, ապրանքի չափորոշիչներ առաջ բերի, որոնք սահմանված չեն եղել հրավերի տեխնիկական բնութագրով:

Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը 14.01.2021թ. թիվ 3-րդ արձանագրությամբ մասնակցին հավելյալ չափորոշիչների վերաբերյալ պարզաբանում է պահանջել, որոնք չեն եղել 8-րդ չափաբաժնով տեխնիկական բնութագրում: Այդ կերպ պատվիրատուն արհեստածին «հիմքեր» է ստեղծել մասնակցի հայտը մերժելու համար: Համարժեք ապրանք ձեռք չբերելու նկատառումից ելնելով անհիմն պահանջներ է առաջ քաշել:

Եթե Պատվիրատուն համարժեք ապրանքատեսակները դիտարկում է համեմատության մեջ տեխնիկական բնութագրով նշված ֆիրմային անվանման ապրանքի հետ և նախապատվությունը տալիս իր կողմից նշված ապրանքանիշին, ապա օրենսդրի կողմից սահմանված համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը դառնում է իմաստազուրկ, իսկ պատվիրատուի գործողությունները քողարկված նախապես ձեռք բերված համաձայնություն է, նշված ֆիրմային անվանմաբ ապրանք մատակարարողի հետ:

3. Պահանջ.

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 4 արձանագրության 1-ին եւ 2-րդ կետերի 15.01.2021թ որոշումները,

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել «Մեգիէլ» ՍՊ ընկերության հայտը 8-րդ չափաբաժնի մասով գնահատել հրավերի պահանջներին համապատասխան»:

Ի լրումն բողոքի 02.02.2021թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը՝

«ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ընթացակարգում քննվող բողոքի առնչությամբ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության 26.01.2021թ. թիվ 08-60 գրությամբ ներկայացրած որոշ տեսակետների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Պատվիրատուն հայտնել, որ «Մասնակիցը առավել մանրակրկիտ և ամբողջական բնութագրեր հավելված 1.1-ով չի ներկայացրել, չի հերքել նաև հանձնաժողովի առաջ բերած ցուցանիշների մասով տվյալները, հետևաբար և ընդունել է այդ ցուցանիշների գոյություն ունենալը և իրարից տարբերվելու փաստը»:

Պատվիրատուն հրավերի տեխնիկական բնութագրով ներկայացրել է, որ անհրաժեշտ է ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Եվրոսեթ, Trilly AF AG5232, մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Տեխնիկական բնութագրով այլ չափորոշիչների պահանջ չի եղել:

Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցել է Medtronic BBP241 մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով՝ համարժեք ապրանքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Քանի որ պատվիրատուն հղում է արել ֆիրմային անվանմանը և մոդելին, ուստի հասկանում ենք, որ անհնար է եղել ներկայացնել բնութագրող այլ չափորոշիչներ:

Տեխնիկական բնութագրում ֆիրմային անվանման առկայության պարագայում, մասնակիցը ընթացակարգով հայտ է ներկայացրել համարժեք ապրանք և, քանի որ

բնութագրող այլ չափորոշիչներ ներկայացված չեն եղել, ուստի հավելված 1.1-ով ներկայացվել է այն, ինչ պահանջվել է հրավերով:

Ինչ վերաբերում է «հանձնաժողովի առաջ բերած ցուցանիշներին», ապա հանձնաժողովն իրավասու չէ հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրերից դուրս այլ պահանջ, ցուցանիշներ ներկայացնել մասնակցին, իսկ ցուցանիշների գոյությունը առհասարակ օբյեկտիվ իրականության մեջ չենք բացառում:

Պատվիրատուն իր ներկայացրած հրավերի, հանձնաժողովի գործունեության օրինականության և բողոքի վերաբերյալ օբյեկտիվ տեսակետ ներկայացնելու անհրաժեշտություն ունի և այլ ոչ՝ բառախաղ:

Պատվիրատուն տեսակետ է հայտնում, որ «Մասնակիցը պարտավոր է ապրանքի համարժեքության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած բոլոր ցուցանիշների մասով ապահովել համարժեք փոխարինելի ցուցանիշներով ապրանք, քանի որ ի սկզբանե հրավերում կատարվել է հղում այդպիսի ցուցանիշներով ապրանքին»:

Մասնակիցը պարտավոր է առաջնորդվել բացառապես հրավերի պահանջներով, այդ պահանջներով առաջնորդվելու պարտավորություն ունի նաև գնահատող հանձնաժողովը, սակայն սույն ընթացակարգով գնահատող հանձնաժողովը դուրս է եկել հրավերի պահանջներից և իր կողմից հավելյալ ցուցանիշների պահանջ է ներկայացրել:

Եթե ի սկզբանե հնարավոր էր գնման ապրանքի նկարագիրը ներկայացնել թեկուզ որոշ չափորոշիչներով, ապա ինչու հենց այդպես էլ չի ներկայացվել տեխնիկական բնութագիրը առանց ֆիրմային անվանման և մոդելին հղում անելով: Այն, որ հանձնաժողովը ցուցանիշներ է առաջ բերում, նշանակում է, որ այնուամենայնիվ ապրանքի տեխնիկական բնութագիր ներկայացնելու հնարավորություն առկա է եղել՝ առանց հղումներ անելու, այլապես պատվիրատուի դրսևորումները անորոշության դաշտ են ստեղծում՝ ծուղակ առաջացնելով մասնակիցների համար:

ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ծածկագրով բողոքի քննության 29.01.2021թ. կայացած նիստում, «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հարցադրում է արվել պատվիրատուի ներկայացուցչին, թե ինչպե՞ս են գնահատում համարժեքությունը և ապահովում օրենքի պահանջը, որի վերաբերյալ պատասխան ներկայացնելու ընթացքում պատվիրատուի ներկայացուցչին խոչընդոտվեց և թույլ չտրվեց պատասխանել այդ հարցին, այն դիտարկմամբ, թե արդյո՞ք իրավասու է պատասխանելու հնչեցված հարցին:

Նկատենք, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը լիազորել էր Կ. Դրամբյանին ներկայացնելու բժշկական կենտրոնի շահերը, հետևաբար՝ լիազորողը գնահատել է Կ. Դրամբյանի կոմպետենտությունը, ուստի իրավասու էր պատասխանել նաև այդ հարցին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.01.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.01.2021թ. թիվ 08-60 գրությամբ բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 20.01.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ծածկագրով բողոքի՝ հայտնում ենք հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 13-րդ հոդվածի

1-ին կետի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

5-րդ կետի համաձայն՝

«Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Կենտրոնի պատասխանատու ստորաբաժանումը ներկայացրել է ապրանքի ոչ ամբողջական տեխնիկական բնութագրերով գնման առարկա, կատարելով հղում ապրանքն արտադրողին և ֆիրմային նշանին: Որպես գնման առարկայի բնութագրեր ներկայացրել է չափի միավորը, քանակը, ապրանքի փաթեթավորումը, որոնց հիման վրա կազմվել է Ընթացակարգի հրավերը: Հրավերում նշված չափաբաժնի մասով որպես տեխնիկական բնութագրեր ներառված է հետևյալը.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Արտադրողը և Ապրանքային նշանը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը	Չափման միավորը	2021թ. Գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը
8	ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:	հատ	10
Ընդհանուր պայմաններ	Բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը: Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:				

«Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտով, որպես համարժեք ապրանք առաջարկել է մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորմամբ, համարժեք Medtronic BBP241:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 15-րդ կետի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը: Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ)»:

Գնահատող հանձնաժողովի կազմում, որպես հանձնաժողովի նախագահ, ներառված է բժիշկ, կենտրոնի պատասխանատու պերֆուզիոլոգ Արկադի Օհանջանյանը, ով հանդիսանում է տվյալ ապրանքի կիրառման ուղղակի պատասխանատուն: Տվյալ դեպքում՝ գնահատող հանձնաժողովը ունի ապրանքի գնահատման մասնագիտական կարողություն, ինչը և դրսևորել է: Արդյունքում, 14.01.2021թ. կայացած նիստին գնահատող հանձնաժողովը արձանագրել է մասնակցի առաջարկած ապրանքի և հրավերով նախատեսված ապրանքի միջև այնպիսի տեխնիկական բնութագրիչների հստակ տարբերություններ, որոնք չեն կարող ընդունվել, որպես համարժեք փոխարինելի:

Այնուհետև, նիստի արձանագրությունը ներկայացվել է Մասնակցին և Օրենքով սահմանված կարգով առաջարկվել սահմանված ժամկետում ներկայացնել տեխնիկական առաջարկի շտկում: Մասնակիցը սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է իր դիրքորոշումը տվյալ հարցի շուրջ, սակայն տեխնիկական բնութագրերի շտկում չի իրականացրել, չի առաջարկել նաև որևէ այլ, համարժեք փոխարինելի ապրանք: Ընկերությունը միայն հղում է կատարել հրավերի տեխնիական բնութագրերին և հայտնել, որ նման բնութագրիչների պայմաններում մասնակիցը կարող է մասնակցել համարժեք ապրանքով: Հրավերի պահանջների համաձայն՝ Մասնակիցը հրավերի թիվ 1 հավելվածով պարտավորվում է ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համաձայն՝ հավելված 1.1, և այդ բնութագրերը ներառվում են

պայմանագրում: Մասնակիցը առավել մանրակրկիտ և ամբողջական բնութագրեր հավելված 1.1-ով չի ներկայացրել, չի հերքել նաև հանձնաժողովի առաջ բերած ցուցանիշների մասով տվյալները, հետևաբար և ընդունել է այդ ցուցանիշների գոյություն ունենալու և իրարից տարբերվելու փաստը:

Պատվիրատուն ամենևին չի հերքում այն, որ Մասնակիցը կարող է համարժեք ապրանքով առաջարկ ներկայացնել տվյալ չափաբաժնի մասով: Սակայն, համարժեքության գնահատման ժամանակ, երբ ապրանքի լիարժեք չնկարագրվելու հիմքով պայմանավորված հրավերում կատարվում է հղում որևէ արտադրողի կամ մոդելի, չի կարող դիտարկվել միայն այն մասնակի ներկայացված տեխնիկական բնութագրիչները, որոնք ներառվել են հրավերում: Հակառակ դեպքում «Կամ համարժեք» բառակապակցության իմաստը, համարժեքության գնահատման մեխանիզմը, ինչպես նաև Օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված դրույթը տվյալ մասով իմաստազրկվում են: Սույն դեպքում Մասնակիցը պարտավոր է ապրանքի համարժեքության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած բոլոր ցուցանիշների մասով ապահովել համարժեք փոխարինելի ցուցանիշներով ապրանք, քանի որ ի սկզբանե հրավերում կատարվել է հղում այդպիսի ցուցանիշներով ապրանքին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

«Գնման առարկայի բնութագրերը

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

Մասնակիցների առաջարկերը և դրանց համարժեք փոխարինելիությունը հրավերով նախատեսված ապրանքներին իրականացնում է գնահատող հանձնաժողովը: Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման: Սույն ընթացակարգում գնահատող հանձնաժողովը հստակ հիմնավորել է Մասնակցի

առաջարկի մերժման հիմքում ընկած տեխնիկական ցուցանիշների անհամապատասխանությունները և հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով հայտը մերժել:

Ելնելով վերը նշվածներից՝ գտնում ենք, որ Մասնակցի բողոքը հիմնավոր չէ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.01.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, 8-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ ապրանքը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG 5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

3.«Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 8-րդ չափաբաժանի մասով առաջարկել է հետևյալ ապրանքը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Medtronic	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: համարժեք Medtronic BBP241

4.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Նշված չափաբաժնով ներկայացված

Medtronic BBP241 օքսիգենատորը ունի 2լ/րոպե արյան թողունակության ցուցանիշ, ինչպես նաև նախատեսված է մինչև 18 կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար: Սակայն, Հրավերով նախատեսված մանկական օքսիգենատորը ունի 3.5լ/րոպե արյան թողունակություն և նախատեսված է մինչև 35 կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար, ուստի գնահատող հանձնաժողովը որոշոց նիստը կասեցնել և առաջարկի շտկման նպատակով մասնակցին տրամադրել Օրենսդրությամբ սահմանված ժամկետ: Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը անցկացնել 15.01.2021թ ժամը 14:30-ին»:

5. «Մեգիէլ» ՍՊԸ-ն 15.01.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 14.01.2021թ. թիվ 3 արձանագրության՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված հրավերի տեխնիկական բնութագրի 8-րդ չափաբաժնում պահանջվում է հետևյալը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG 5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Միևնույն ժամանակ նշել եք, որ կարող են մասնակցել համարժեք ապրանքով, այսինքն՝ օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Ստորև «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրածը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Medtronic	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: Համարժեք Medtronic BBP241

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

«Ընդունել ի գիտություն, որ սահմանված մեկօրյա ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, սակայն չի ներկայացրել և չի շտկել իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական հատկանիշները այն չափանիշներով, որոնք ներկայացվել էին գնահատող հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի

-1-ին կետի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ

մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

-5-րդ կետի համաձայն՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, արտադրողը և/կամ ապրանքային նշանը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրերը ներառվում են կնքվող պայմանագրերում:

Հանձնաժողովը գտնում է նաև, որ համարժեք ապրանք առաջարկելու դեպքում այդ առաջարկի գնահատումը իրականացվում է գնահատող հանձնաժողովի կողմից, մինչև հաղթողի ընտրությունը:

Փաստացի Ընկերությունը սահմանված ժամկետում ամբողջական տեխնիկական ցուցանիշներ չներկայացնելով չի հերքել գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված տեխնիկական հատկանիշների տարբերությունը և չի հիմնավորել առաջարկած ապրանքի համարժեքությունը հրավերով նախատեսվածին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով՝ առաջարկված ապրանքը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմքով:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և բողոքի լրացումը, «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.01.2021թ. թիվ 08-60 գրությունը, «ՆՄԲԿ-

ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, 8-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ ապրանքը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG 5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 8-րդ չափաբաժանի մասով առաջարկել է հետևյալ ապրանքը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Medtronic	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: համարժեք Medtronic BBP241

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Նշված չափաբաժնով ներկայացված Medtronic BBP241 օքսիգենատորը ունի 2լ/րոպե արյան թողունակության ցուցանիշ, ինչպես նաև նախատեսված է մինչեւ 18 կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար: Սակայն, Հրավերով նախատեսված մանկական օքսիգենատորը ունի 3.5լ/րոպե արյան թողունակություն և նախատեսված է մինչև 35 կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար, ուստի գնահատող հանձնաժողովը որոշոց նիստը կասեցնել և առաջարկի շտկման նպատակով մասնակցին տրամադրել Օրենսդրությամբ սահմանված ժամկետ: Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը անցկացնել 15.01.2021թ ժամը 14:30-ին»:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 15.01.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 14.01.2021թ. թիվ 3 արձանագրության՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված հրավերի տեխնիկական բնութագրի 8-րդ չափաբաժնում պահանջվում է հետևյալը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG 5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Միևնույն ժամանակ նշել եք, որ կարող են մասնակցել համարժեք ապրանքով, այսինքն՝ օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Ստորև «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրածը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Medtronic	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: Համարժեք Medtronic BBP241

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

«Ընդունել ի գիտություն, որ սահմանված մեկօրյա ժամկետում «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, սակայն չի ներկայացրել և չի շտկել իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական հատկանիշները այն չափանիշներով, որոնք ներկայացվել էին գնահատող հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի

-1-ին կետի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

-5-րդ կետի համաձայն՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, արտադրողը և/կամ ապրանքային նշանը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրերը ներառվում են կնքվող պայմանագրերում:

Հանձնաժողովը գտնում է նաև, որ համարժեք ապրանք առաջարկելու դեպքում այդ առաջարկի գնահատումը իրականացվում է գնահատող հանձնաժողովի կողմից, մինչև հաղթողի ընտրությունը:

Փաստացի ընկերությունը սահմանված ժամկետում ամբողջական տեխնիկական ցուցանիշներ չներկայացնելով չի հերքել գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված տեխնիկական հատկանիշների տարբերությունը և չի հիմնավորել առաջարկած ապրանքի համարժեքությունը հրավերով նախատեսվածին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով՝ առաջարկված ապրանքը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմքով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն բողոքի քննության ընթացքում հայտնել է, որ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Եվրոսեթ, Trilly AF AG5232, մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: Տեխնիկական բնութագրով այլ չափորոշիչների պահանջ չի եղել: Ընկերությունը որպես համարժեք ապրանք առաջարկել է մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորմամբ՝ համարժեք Medtronic BBP241:

Միաժամանակ հայտնել է, որ Պատվիրատուն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով առանց անհրաժեշտության նշել է ֆիրմային անվանում և այդ անվանումով առաջնորդվելով է գնահատում այլ ապրանքների համարժեքությունը: Նման պարագայում համարժեք ապրանքատեսակով հայտ ներկայացնելն իմաստազրկվում է, քանի որ, պատվիրատուն ուղեցույց է դիտարկելու բացառապես այդ ֆիրմայի արտադրանքը և ոչ թե այնպիսի չափորոշիչներով ապրանք, որոնք համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը՝ առաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Պատվիրատուի ներկայացուցիչը ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 բողոքի քննության ընթացքում հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում, որպես հանձնաժողովի նախագահ, ներառվել է բժիշկ, կենտրոնի պատասխանատու պերֆուզիոլոգ Արկադի Օհանջանյանը, ով հանդիսանում է տվյալ ապրանքի կիրառման ուղղակի պատասխանատուն: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն ունի ապրանքի գնահատման մասնագիտական կարողություն, ինչը և դրսևորել է: Արդյունքում 14.01.2021թ. կայացած նիստին գնահատող հանձնաժողովը արձանագրել է մասնակցի առաջարկած ապրանքի և հրավերով նախատեսված ապրանքի միջև այնպիսի տեխնիկական բնութագրիչների հստակ տարբերություններ, որոնք չեն կարող ընդունվել որպես համարժեք փոխարինելի:

Այսպիսով՝ բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 03.02.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/1328-2021 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարին՝ խնդրելով հայտնել՝ արդյոք ՀՀ առողջապահության նախարարությունը կամ ՀՀ առողջապահության

նախարարության ենթակայության տակ գտնվող կառույցները կարող են սույն գործի քննության շրջանակներում ներգրավվել և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման բնութագրերի համարժեքության վերաբերյալ տալ համապատասխան մասնագիտական կարծիք կամ եզրակացություն:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 12.02.2021թ. թիվ Մ-5670-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթի 20.01.2020թ. ներկայացված բողոքի շրջանակներում, ՀՀ առողջապահության նախարարությունը առաջարկում է Առողջապահական ծրագրեր իրականացնող գրասենյակի բժշկական սարքավորումների մասնագետ Արթուր Գևորգյանի թեկնածությունը»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.02.2021թ. դիմել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջադրված թեկնածուին՝ ՀՀ ԱՆ Առողջապահական ծրագրեր իրականացնող գրասենյակի բժշկական սարքավորումների մասնագետ Արթուր Գևորգյանին՝ ներկայացնելով Ընթացակարգի հրավերի 8-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագիրը և «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, և խնդրել է ներկայացնել Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի և Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի համարժեքության վերաբերյալ մասնագիտական կարծիք:

Ի պատասխան վերը նշվածի՝ ՀՀ ԱՆ Առողջապահական ծրագրեր իրականացնող գրասենյակի բժշկական սարքավորումների մասնագետ Արթուր Գևորգյանը գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրեցի Ձեր կողմից ուղարկված տեխնիկական բնութագրերը: «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հրավերի 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքի՝ ԱԱՇ օքսիգենատոր մանկական, տեխնիկական նկարագրությունը չի ներառում տեղեկատվություն օքսիգենատորի տեխնիկական տվյալների վերաբերյալ (արտադրանքի յուրահատկություններ, չափսեր, միացուցիչների տեսակներ ու չափսեր, արտադրողի կողմից օգտագործվող նյութեր և այլն): «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նույնպես բացակայում է

նմանատիպ տեղեկատվությունը, որն օրինաչափ է մրցույթի տեխնիկական բնութագրում տվյալ տեղեկատվության բացակայության պարագայում: Մյուս կողմից, հնարավոր է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող Medtronic ֆիրմայի BBP241 մոդելի ԱԱՇ մանկական օքսիգենատորը համատեղելի չէ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ում առկա սարքավորման հետ:

«Նորք-Մարաշ» ԲԿ-ի կողմից և «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը թույլ չի տալիս տալ վերջնական եզրակացություն»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնման ընթացակարգը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, «Մեգիէլ» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված հիմքերը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԱՆ Առողջապահական ծրագրեր իրականացնող գրասենյակի բժշկական սարքավորումների մասնագետ Արթուր Գևորգյանի մասնագիտական եզրակացությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ***հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը:

Այսպիսով՝ վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը

կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ՝ ուղղված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1.Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանն ուղղված պարտադիր պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Ընդ որում՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, ***<u>երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն</u>*** առանց դրանց: ***<u>Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը</u>*** պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 8-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի ձեռբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Գնման առարկայի անվանումը	Արտադրողը և Ապրանքային նշանը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը
ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG 5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանն ուղղված Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջները, քանի որ Պատվիրատուն չի բնութագրել ձեռք բերվող ապրանքի՝ ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, հատկանիշները, այլ միայն սահմանափակվել է հղում կատարելով արտադրողին և ապրանքի մոդելին՝ հնարավորություն չտալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել ձեռքբերվող գնման առարկան՝ միաժամանակ տալով տարակերպ մեկնաբանության տեղիք:

Դրա հետ մեկտեղ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հպտուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հպտուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:</u>

Ընդ որում՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին, և պետք է ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով Ընկերության կողմից 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը ներկայացվել է հետևյալ տեսքով՝

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Medtronic	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: Համարժեք Medtronic BBP241

արձանագրում եմ, որ այստեղ ևս բացակայում է ապրանքի հատկանիշների բնութագրումը, որտեղ որպես համարժեք ապրանք նշվել է միայն արտադրողը և մոդելը, այն է՝ համարժեք Medtronic BBP241, որը հնարավորություն չի տալիս գնահատելու ապրանքի համարժեքությունը Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքին:

Սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունն իրականացնում է բողոքով ներկայացված ապացույցների հիման վրա, ընդ որում՝ բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն է կրում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ ներկայացնելու

պարտականությունը: Ընդ որում՝ օրենսդիրը չի սահմանափակում բողոքի ամբողջական փաստացի և իրավական հիմքերը, բավարար ապացույցները միայն բողոքին կից ներկայացնելով, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու և/կամ փոփոխելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Մինչդեռ արձանագրում եմ, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն, օգտվելով իրեն Օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք, սակայն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող և Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի համարժեքության վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց: Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է թե՛ բողոքը ներկայացնելու և թե՛ բողոքի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը:

Այսպիսով՝ փաստերը, որոնք օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև Ընկերության կողմից հայտի 1.1 հավելվածով՝ ապրանքի ամբողջական նկարագրով, ապրանքի հատկանիշների բնութագրման բացակայության պայմաններում՝ նշված լինելով միայն արտադրողը և մոդելը, հնարավոր չէ գնահատել ապրանքների համարժեքությունը և դրանով պայմանավորված՝ հայտի մերժման իրավաչափությունը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ Պատվիրատուն տեխնիկական բնութագրով առանց անհրաժեշտության նշել է ֆիրմային անվանում և այդ անվանումով առաջնորդվելով է գնահատում այլ ապրանքների համարժեքությունը: Նման պարագայում համարժեք ապրանքատեսակով հայտ ներկայացնելն իմաստազրկվում է, քանի որ Պատվիրատուն ուղեցույց է դիտարկելու բացառապես այդ ֆիրմայի արտադրանքը և ոչ թե այնպիսի չափորոշիչներով ապրանք, որոնք համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը՝ առաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև

հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ո՛չ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների և ո՛չ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ավելին՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում, որը ևս Ընկերության կողմից չի պահանջվել, իսկ վիճարկվող բողոքը ներկայացվել է հայտերը բացվելուց հետո, երբ Ընկերության հայտը մերժվել է, ուստի բողոքը սույն մասով չի կարող քննության առարկա հանդիսանալ, քանի որ բողոքը ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետից հետո:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 20.01.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**